

# Ի Յունակ Արմենի

Հպրութեան պարտիմը  
շնորհակալ լինել».

ՄԱՏԹ. ԳԱՐԱԳԱՇ

Զերեափի Մեսրոպեան նշանագրաց ի  
մեծի աւուրս ցնծամք զյիշատակ և զդրպ-  
րութեան Հայաստան Աղինս խմբեմք զաօն  
որդիքս Արամեան տոհմի։ Այդ ցնծալիցն  
ուրախութիւն բարձեալ տանի զմեզ յա-  
ւուրսն անդր առաջինս, ուր երանելի  
հարցն մեր պատուականք, Սահակ և որ  
Մաշթոցն կոչի Մեսրոր, ի մէջ անցեալ ի  
զլուխ հանին զոր առաջի երկալն էր նո-  
ցա, — զհիմն և զարուեստ հայկեանս դրպ-  
րութեան՝ հանդերձ իւրեանց աշակեր-  
տօքն։

Եթէ ոչ յաջողութեամբ պստկեալ ինչ  
էին իղձք նոցա, և քրտնալիցն վաստակ  
յաղագս նախակերտն արարչութեան նշա-  
նագրացդ յոր վայելեմքս՝ ի դերեւ ել-  
եալ, և ոչ հայեցին դպրութիւն մարմին  
առեալ կանգնէր հոյակապ շինուածովք,  
ապա վիճակ ելանէր ընդ խուժս ազգաց  
ընդ վայրավատինս ի մի համար լինել մեզ  
և ընդ դուժս որ ամենեւին գրով ինչ ոչ  
վարին։

Որ միանգամ զգրովք հարցն գան՝  
դիւրին իցէ նոցա հաւաստեաւ ի միտ առ-  
նուլ եթէ հայեցին բարբառ զոր մատե-  
նագրել առին մերքս ի սկզբան անդ դա-  
րուն հինգերորդի, իրուեւ յիսնամենայ ժա-  
մանակաւ, չեկաց միշտ ի նմին աստիս  
զօրութեան ըստ իւրոց պատշաճիցն և ոչ  
ի գեղն վայելչութեան ըստ առանձինն  
հանգամանաց։ Այլ սակայն որ առւաւն ի  
հարց անտի օրինակ ուղղութեանն՝ ի նա-  
խանձ նմանութեան դրդեաց զորս եկինն  
զհետ առ յապա դարք։

Թէպէտ և ոչ նոցուն բարբառովն այժմա  
իցէ մեզ վարել, զի անհնարութեան են  
իրքդ, զոր օրինակ ի լիւդ չմարթի գնալ  
ումնք ընդդէմ բռնութեան ջուրցն հո-  
սանաց, այլ լեզու ոսկեղէն որ յայնժամ  
ուրեմն ընդ գրով արկաւ ըստ ընիկ զար-  
դուցն և իւրական շրջուածոց՝ ի միջի  
կայ իրու ի պահեստ յաւիտեանց։ Որոց  
ի մթերսն փոյթ յանձին ունին մտանել՝  
հոլանէ զգեղ վայելչութեանն և մասն-  
մուտ ի ճոխութիւնն առնէ ըստ իւրա-  
քանչիւր պիտոյից։

Եւ որ հմուտն ոք իցէ, ո՛չ միայն  
տաղակութիւն զուսումն հնոցն դպրու-  
թեան շհամարի, այլ և նովին հաղորդ  
զաեալ մեծութեան ոգւոյ նորա, շնոր-  
հակալու միաս առ նախնիսն ունիցի զօդ-  
տութեանց որ անտի լինին։

Իսկ արդ եթէ դպրութեան, ըստ գրչի  
ումնեմն ճարտարի, պարտիմք շնորհակալ  
լինել, ո՛րչափ ևս առաւել երանելի հարցն  
մերոց որ ի նոյն նպաստ եղեն իւրեանց  
հանճարով։

Մ. Կիկիրձեն